

# ՎԼԱՊԻՄԻՐ ՊՈՂՆԵՐ

## ՀՐԱԺԵՇՏ ՊԱՏՐԱՆՔՆԵՐԻՆ

Իմ, ժամանակի և Ռուսաստանի մասին՝  
երկյուղալի անկեղծությամբ

Թարգմանությունը՝ Ֆելիքս Բախչինյանի

Օրակույլ

Երևան - 2019

ՀՏԴ 070.82-94  
ԳՄԴ 76.01  
Պ 757

### **Պոզներ Վլադիմիր Վլադիմիրի**

Պ 757 Հրաժեշտ պատրանքներին: Իմ, ժամանակի և Ռուսաստանի մասին՝ երկյուղալի անկեղծությամբ/ Վլադիմիր Պոզներ; Թարգմ.՝ Ֆ. Բախչինյանի.- Եր.: Օրակուլ, 2019.- 650 էջ:

«Հրաժեշտ պատրանքներին» գլուխը Վլադիմիր Պոզները գլուխ է քսաննեկ տարի առաջ: Դուք է անգլերեն: Ամերիկայում այն տասներկու շաբաթ սնացել է The New York Times թերթի բեսթսելլերների ցանկում: Պոզները մտածում էր, ուր իմ գլուխը անմիջապես կթաղանթանի ռուսերեն, քայք, լինչպես լինքն է սառած. «Այն չափազանց դժվար է տրվել լինձ, մի փայլ կապաստմ»: Սպասեց տասնութ տարի, թաղանթանությունը սկսվել է 2008 թվականին: Եվս երեք տարի նա խաղում էր, թե լինչպես ձեռագրում այտացալեր այլ անցած տարիները: Եվ միայն 2012-ին, հեղինակը կայծիքով, եկավ «Հրաժեշտ պատրանքներին» գլուխը ռուսերեն տարբերակը կատարվածն ժամանակը:

Հայերեն թաղանթանությունը կատարվել է ռուսերենից:

ՀՏԴ 070.82-94  
ԳՄԴ 76.01

ISBN 978-9939-9117-5-5

© Պոզներ Վ. Վ.  
© Օրակուլ, 2019  
© Բախչինյան Ֆ. (թարգմ. համար), 2019

Թարգմանչի կողմից	5
Նախաբանի փոխարեն	11
Գլուխ 1. Իմ Ամերիկան	14
Գլուխ 2. Լիմբոս	128
Գլուխ 3. Ժողովուրդների հայրը	177
Գլուխ 4. «Գնանք Անգլիա...»	255
Գլուխ 5. Սոճիների և հեռագրասյուների մասին	317
Գլուխ 6. Վիշապը, Մեծամողեսները և Դոդոշների ժամանակաշրջանը	416
Գլուխ 7. Բեկում	473
Գլուխ 8. Վերադարձ	537
Գլուխ 9. Չրաժեշտ պատրանքներին	576
Վերջաբան	588
Եզրափակում	616

ՆԿԻՐՎՈՒՄ Է ԻՄ ԾՆՈՂՆԵՐԻՆ՝  
GERALDINE LUTTEN  
ՎԼԱԴԻՄԻՐ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՉ ՊՈԶՆԵՐԻՆ

*Ինչպես թռչնակը լարին,  
Ինչպես հարբեցողը՝ երգչախմբում կեսգիշերային,  
Ազատ լինել էի ուզում հաջողության համար իմ:*

Լեոնարդ Քոհեն

Համեմայնդեպս ես փորձեցի:

Ռեոդալ Պատրիկ ՄակՍերֆին՝  
«Կկվի բնի վրայով թռչելիս» կինոնկարում

# ԹԱՐԳՄԱՆՉԻ ԿՈՂՄԻՑ

Կար ժամանակ, երբ ես անգլիա հիշում էի կարպացած գրքերի քանակն ու վերնագրերը: Հետո կորցրեցի այդ թիվը՝ շատ ազնիվ ու արդարացի պատճառով: Թող անհամեստ չթվա, բայց երբ սկսեցի գրքեր գրել, հպարտությամբ հաշվում ու մտապահում էի լույս տեսած գրքերի քանակը: Շուտով այդ թիվն էլ կորցրեցի՝ ոչ պակաս ազնիվ ու արդարացի պատճառով: Սկսվեց իմ կյանքի ամենահետաքրքիր ու ամենաբերուրդ շրջանը. ես սկսեցի գրքեր թարգմանել: Հիմա ես ինձ բռնում եմ ևս մի անմեղ «հանցանքի» մեջ. ես մոռացել եմ նաև իմ թարգմանած գրքերի թիվն ու վերնագրերը... Այս մոռացությունը գուցե ինձ ուրախություն պատճառեի, եթե դա կապված լինեի գուտ կարպացած, գրած կամ թարգմանած գրքերի քանակի հետ, բայց ես ո՛չ սնափառ եմ, ո՛չ էլ միամիտ և հասկանում եմ, որ գտնվում եմ մի այնպիսի տարիքում, երբ դավաճանում եմ ոչ թե հերթական կանայք կամ ընկերները, այլ վերջին, ամենավերջին ու անդառնալի դավաճանը՝ հիշողությունը... ուր զնալով դառնում է իմ ամենահավատարիմ դավաճանը... նա այլևս չի դադարում դավաճանել:

Բայց ազնիվ չի լինի, եթե ներանարյա ու տրտնջալուս հետ միաժամանակ նաև երախտապարտ չլինեմ իմ հիշողությանը՝ լավագույնը գտելու և դա անջնջելի տառերով իմ մտապատկերի հսկա վահանակի վրա անմահացնելու, իր հանճարեղություն քարձր ու ընտիր ճաշակի համար... Կան քարտեզներ, որոնց վրա երևում են անգամ տեղանքի ծառերը, տները, ճանապարհները... Բայց այլ են աշխարհի քարտեզները. դրանց վրա երևում են միայն ամենամեծ գետերը, ամենամեծ լեռները, ամենամեծ քաղաքները: Իմ հիշողության վահանակը նման է աշխարհի քարտեզին. այնտեղ մնացել են կարպացած, գրած, թարգմանած ամենալավ գրքերի, ամենալավ ֆիլմերի, ամենալավ երգերի վերնագրերը, ամենալավ մարդկանց անունները... Իսկապես, փառք Աստծու, որ չեմ կորցրել ու չեմ կորցնի լավագույնի մասին հիշողությունս:

Վլադիմիր Պոզների «Հրաժեշտ պատյանքներին» գիրքը մինչև վերջին ժամանակներս հիշողության քարտեզ-վահանակի վրա խիստ պատվավոր տեղ ունեի «Կարպացած լավագույն գրքեր» անվանակարգում. այդ նույն վերնագրից գրվել

է երկրորդ անգամ, արդեն հայերէն՝ «Թարգմանած լավագոյն գրքեր» անվանակարգում: Այդպիսի կրկնությունները հազվադէպ են, քանի որ այդպիսի գրքերն են հազվագյուտ:

Գրքի առաջաբանում հեղինակը գրում է. «Գիրքը լայս տեսով 1990 թվականին և, ի զարմանս բոլորի, բացառությամբ Ֆրեդ Հիլլի, շատով հայտնվեց The New York Times թերթի բեսթսելլերների ամենահեղինակավոր ցուցակում և այնտեղ մնաց տասներկու շաբաթ»:

Թուղ ների ինձ հեղինակը, բայց գրքերի կարևորությունը և արժեքը մենք (գրեթէ վտահ եմ՝ հեղինակը նույնպէս) դեռ սովոր չենք չափել ըստ best seller-ի, այսինքն՝ ամենալավ վաճառվելու հատկանիշի, մանավանդ որ՝ բեսթսելլեր տերմինը վաճառքի հտտակ չափ կամ տեղիծագործության որակ չի սահմանում, այլ միայն վկայում է հանրաճանաչության մասին: Կինոարտադրության բրկբաստերը և երաժշտական տեղիծագործության հիթ բնութագրիչները նույնպէս մի տեսակ արևեստական են և շատ բան չասող: Ինչպէս մեզանից ամեն մեկը կարող է ունենալ իր բեսթսելլերը, իր բրկբաստերը և իր հիթը, որը կարող է ընդհանրապէս հանրաճանաչ չլինել, այնպէս էլ կարող է ամենահանրաճանաչ բեսթսելլերը, բրկբաստերը կամ հիթը ընդհանրապէս մերը չլինել կամ ընդհանրապէս բեսթսելլեր, բրկբաստեր կամ հիթ չլինել, պարզապէս չհամապատասխանել իսկական բնութագրիչներին:

Ավելի ճիշտ կլինէր գրքի կարևորությունը չափել ոչ թէ ըստ վաճառքի, այլ ըստ ընթերցողների քանակի: Հայտնի ճշմարտություն է, որ այդ նույն ԱՄՆ-ում գիրք գնելը ամենևին էլ դեռ չի նշանակում գնած գիրքը կարդալ: Ամերիկացիները նախանձախնայիլ են իրենց շքեղ գրադարակների ամենաշատ աչքի ընկնող հատվածում ունենալ տարվա լավագոյն բեսթսելլերները, բայց ամենևին էլ պարտավորված չեն զգում կարդալ ուրանք: Լավագոյն դեպքում նրանք կարող են ծանոթանալ միայն գրքի անոտացիային կամ մեքենայի մեջ լսել համառոտ գրախոսականը, համացանցում մկնիկը սահեցնելով անցնել գրքի մասին պատմող հսկիլորձ տեղեկատվության վրայով: Ամերիկայում ամենաթանկ կապիտալը ժամանակն է, իսկ ժամանակը ժամանակ չունի... Ու հազարավոր, միլիոնավոր մարդիկ կարող են գնել ամենալավ բեսթսելլերները և սեփական պատկերացում չունենալ գրքի բովանդակության, գաւղի աշխարհայացքի, գաղափարների, ոճի մասին:

Ավելին, ամենաարագ վաճառվող ու մեծ տպաքանակ ունեցող գրքերը հաճախ գոտ կոմերցիոն նպատակ են հետապնդում: Հրատարակիչների լավ գովազդի շնորհիվ նոր տպագրված գիրքը կարող է անմիջապէս ձեռք բերել մեծ հանրաճանաչություն, ինչին կարող են նպատեղ հեղինակի նախորդ գրքի հաջողությունը, սենսացիա

պարունակալ փաստերը, բարձրարակ տպագրական մշակույթը, էլի շատ ու շատ բաներ, բայց ոչ անպայման գրքի բովանդակությունը, սյուժեն, գեղարվեստական կամ գիտական արժանիքները:

Այս ամենի մասին խոսվեց՝ ասելու համար ամենակարևորը՝ Վլադիմիր Պուգնե-րի «Հրաժեշտ պատրանքներին» գիրքը դարձավ բեսթսելլեր՝ գիրքը բնորոշող ամե-նաազնիվ, ամենակիմնական, ամենակարևոր ու անանց որակների համար. հեղի-նակը ասելիք ունեի մեծ թվով լսարանի համար, նրա գրքից խմանալու, սովորելու, զգալու ու հասկանալու շատ բան ունեի ամենատարբեր ազգությունների պատկա-նույ, ամենահակասական գաղափարներ ունեցող, ամենաայլախուհ մարդկանց մի հսկա բանակ: Այդպիսին են եղել լավագույն գրքերը բոլոր ժամանակներում, պահք չեն չափվել վաճառքի գնով կամ կուշտ ու փափուկ կազմով: Վերջերս ձեռքս ընկավ նորվեգացի մեծ գրող, Նորվեյան մրցանակի դափներկյի Քոյուք Համսունի հատուրը՝ 1 ռուբլի 50 կոպեկ արժույթյանը: Իրականում մի՞թե այդքան արժեն այն համա-մարդկային գաղափարները, մարդասիրության այն հզոր սլիքը, որ անկասելիարեն հույսում է նրա գրքի էջերից, տարածվում ու լցվում ընթերցողի մտքի ու սրտի օվկիա-նոս՝ տակնուվրա անելով ամեն ինչ:

Երբ տարիներ առաջ ռուսերենով կարդացի Վ. Պուգների «Հրաժեշտ պատրանք-ներին» գիրքը, առաջին տպավորությունս այն էր, որ գիրք լինելուց առաջ կամ հետո նրա նախևաջառ լայն բացված մի հսկա, ծանր վարագույր է... Գրելով այս գիրքը՝ գրողը հանձն է առել դժվարին մի գործ, քաջություն է ունեցել ետ տանել հենց այն տխրառեղակ երկաթյա վարագույրը, որի ետևում ասես կանգ էին առել ժամանա-կը, միլիոնավոր մարդկանց կյանքերը: Եվ Պուգները, ի պատիվ իրեն, կարողացել է կատարել վարագույրը բացելու հանձնառությունը ու կատարել է իր գրչի գեղեցիկ, սխալ չի լինի ասել, արտիստիկ շարժումով. մի փոքր դժվարությամբ, մի փոքր զգու-շավորությամբ, անշտապ, հանդիսավոր, խնամքով ու հոգատար, վարպետորեն ու սահուն քարացած հանդիսատեսի աչքի առաջ նա բացում է Խուլիդային Մլաթյուն կոչվող փակ ներկայացման վարագույրը: Իսկ հանդիսատեսը ամբողջ աշխարհն էր. չէ՞ որ գիրքը նախ լույս տեսավ անգլերեն: Ահա թե ինչու Վ. Պուգների «Հրաժեշտ պատրանքներին» գիրքը պարզապես բեսթսելլեր կոչելը հավասար է ոչինչ չասելու:

Խուլիդային Մլաթյան փյուզամից հետո բազմաթիվ գրքեր գրվեցին երկաթյա վարագույրից այն կողմ փոթորկվող կյանքի մասին: Ճիշտ թե սուտ, արդարացի թե անարդարացի, թեման այնպիսին էր, որ այդ թեմայով գրված գրքերը, համենայն դեպս այն ժամանակ, բեսթսելլեր դառնալու մեծ հավակնություն ունեին: Բայց թույ ներեն այդ գրքերի հեղինակները, պահնից և ոչ մեկը Պուգների գրքի ծավալայնութ-

յունն ու խաբարթունը չունեին: Դա մի ամբողջ դարաշրջանի վրա նետված խաբարթափանց, մանրագնին ու սլոտացավ հայացք է՝ ներսից և դրսից, կողքից և խաբարթից, անցյալից և ներկայից:

Այստեղ ժամանակի քայլերը վախճարի են, այստեղ հատակ տեսանելի են երկու համաշխարհային պատերազմների հետքերը աշխարհի դեմքին, ու պարզ լսելի են սպիների ցավից դեռևս տնքացող մալուխության ձայնը: Գրքի առաջաբանում գրողն ասում է, որ երբ իր ամերիկացի կալեդա Բրայան Կանը նրան առաջարկեց գիրք գրել իր կյանքի մասին, իր պայմանը մեկն էր՝ առանց անձնական կյանքի դրվագների: Բայց հրատարակչները լավ գիտեին, որ առանց անձնական կյանքի գիրքը կլիներ գունագեղությունից զուրկ քաղաքական վերլուծություն, գիտական աշխատանք, դասագիրք, ինչ ասես, բայց ոչ բեսթսելլեր: Այս գրքի հաջողության ուղիղ կեսը Պոզների ընտանեկան կյանքի հետաքրքիր, երբեմն դրամատիկ, երբեմն զավեշտալի դրվագերն են. նեղ անձնական դեպքերի ու իրադարձությունների նկարագրությունը զարմանալի մի ընտանիքի, որ համաշխարհային փոքրիկների մեջ ապրել է աշխարհով մեկ սփռված, իրենց բախտը պոռոտ տարագիր հրեաների ճակատագրի բոլոր մոլորակները: Մի ամբողջ գերաբնական ոչ միայն դիմակայել է, այլ նաև դարձել աշխարհի դիմագծի վրա ազնիվ հետազիծ թուրած լեզուն՝ ի դեմս իր հայտնի գավակի՝ Վլադիմիր Պոզներ անունով:

Վլադիմիր Պոզների գրքի ամենագրավիչ առանձնահատկությունը նրա պարզ ու հասկանալի ոճն է, լեզուն, իմաստունությամբ տրավաղ խոսքը, ընթերցողի հետ գրողի երկխոսության կառուցվածքի նրբություններն ու սահուն անցումները: Իր պարզության ու հասկանալիության մեջ, սակայն, այն շատ խորն է ու բազմաշերտ, և չնայած հսկա ծավալին՝ մոտ 600 էջ, աներկբայորեն այն կարելի է դասել մի շնչով ընթերցվող գրքերի շարքը:

Պոզների գրքի առաղձը վախենալու չափ բաց անկեղծությունն է, զարմանալի պարզ, անթաքույց անկեղծությունը՝ ինքը իր և շրջապատի հանդեպ: Մեկ նախադասությամբ բնութագրելով, թե ինչի մասին է գիրքը, հեղինակը մի ամբողջ գրքի խորություն ու զգացմունքայնություն է հաղորդում բնութագրմանը. «Իմ, ժամանակի և Ռուսաստանի մասին՝ երկյուղալի անկեղծությամբ»: Անկեղծությունը խսկապես պիտի որ երկյուղալի լիներ Ռուսաստանում ապրած հրեա մտավորականի, լրագրողի համար, ով անցել էր խաբարթային հավատաքննության բոլոր մեծ ու փոքր մամլիչների բովով... երկյուղալի, պարզապես չասենք ցավալի, խսկ հաճախ էլ՝ ուղբերգական:

Ինքնակենսագրական վեպ, ծավալուն խոհագրություն կամ հուշագրություն լինելուց առաջ՝ ընծայագրված սիրելի ծնունդին՝ ֆրանսուհի մորը և հրեա հայրը,

«Հրաժեշտ պատրանքներին» գիրքը մի վիթխարի գրական համայնապատկեր է՝ զգացմունքների, խոհերի անվերջ տարածվող ու մեծացող ակնբերումով: Առաջին հասցքից թվում է, թե դա 20-րդ դարի համայնապատկերն է՝ երկու համաշխարհային պատերազմների ուրվականով, բայց իրականում այդ դարաշրջանը ծնվում է, հենվում է իր նախադր, նախադրյալ նախադրյալ դարաշրջանների հիմքի վրա՝ դրանց տակ թաքնված բազմաթիվ ուրիշ քաղաքակրթությունների, մշակույթների անտեսանելի, նույն շերտերի հետքերով: Այստեղ ավարտված, սկսված, ավարտվող ու սկսվող դարաշրջաններ կան: Ու այդ բոլոր դարաշրջանների մեջ կանգնած է Մարտը՝ հսկա, վիթխարի Մարտը, աշխարհաքաղաքացին՝ ազգությունից, կրոնից, քաղաքական հասցքներից վեր գտնվող Գերմարտը, ով չի վախենում Արարչի անունը գրել փառատառով և անկեղծորեն խոստովանում է, թե ինչու չի հավատում: Իսկ այն, ինչին հավատում է գրողը, ընթերցողը կգտնի այս հսկայածավալ գրքի էջերում, տողատակերում՝ երբեմն ուրիշ, երբեմն այլաբանորեն, բայց միշտ անկեղծ ու շիտակ:

Ընթերցողն անմիջապես կհասկանա, որ գիրքը միայն Վլադիմիր Գուգների մասին չէ, այլ մեզնից ամեն մեկի, ով ապրել է 20-րդ դարի պատմության եղերական, դրամատիկ ժամանակները՝ կարծելով, թե եղել է իր ճակատագրի տերը՝ հավատալով, թե մարտակի, տիեզերքի անվախճան շրջապտույտի մեջ իրեն բախտ է վիճակվել ապրել սեփական կյանքը: Ու փակելով գրքի վերջին էջը՝ նա՝ ընթերցողը, նույնպես կհրաժեշտ կտա պատրանքներին՝ երբի դռնից դուրս գալով ոչ թե դեպի հուսահատության, այլ իմաստնության գեղեցիկ մի ճանապարհ, այն ճանապարհը, որ չինական փիլիսոփայության մեջ խորհրդանշան է կյանքի հավերժության, գեղեցկության, հասունության, իմաստնության ու շարունակականության խորհուրդը:

Ֆելիքս Բախչինյան

**Երևի այդ եղել է** 1987 կամ 1988 թվականին: Այդ ժամանակ ես ծանոթացա Բրայան Կանի հետ՝ ամերիկյան հայտնի լրագրող, գրող և հասարակական գործիչ Ալբերտ Կանի որդու, ում հետ բարեկամություն էր աճում հայրս, երբ ապրում էր Ամերիկայում և աշխատում էր MGM կինոընկերությունում: Կան-ավագը կոմունիստ էր, ԽՍՀՄ ջերմ կալմնակից, և նրա որդին՝ Բրայանը, մեկ կամ երկու անգամ եղել էր հայտնի «Արտեկ» ճամբարում: Մաքքաթիզմի ժամանակ նրա անունը մտցրեցին սև ցուցակի մեջ և զրկեցին աշխատանքից: Հոր փորձը և հայացքները չէին կարող ազդեցություն չունենալ Բրայանի ձևավորման վրա, որը թեև չբարձավ կոմունիստ, բայց հարում էր ձախ վրբերալիստական հայացքներին: Ժամանակ առ ժամանակ նա գալիս էր այն երկիրը, որը սկզբում նրան ներկայացվում էր որպես մարդկության երազանք, բայց նաև հետո, երբ նրան պատեց հիասթափությունը (փակագծեումս նշեմ, որ այդ պատահել է բազմաթիվ նման մարդկանց հետ, որոնք ժամանակին հավատում էին Խորհրդային Միությանը), նա չիզեց կապերը նրա հետ:

Եթե հիշողությունս չի դավաճանում, նրա հետ մեր ծանոթությունը տեղի է ունեցել Մոսկովյան Միջազգային կինոփառատոն նրա այցելության շնորհիվ, ուր նա բերել էր իր վավերագրական կինոնկարը՝ սովետա-ամերիկյան համագործակցության մասին, կարծեմ՝ սիբիրյան կոմունկի վրկության վերաբերյալ: Մի խոսքով, մենք հանդիպեցինք, սկսեցինք շփվել, և ինչ-որ մի պահի Բրայանն ասաց, որ ես պետք է գիրք գրեմ իմ կյանքի մասին: Ես պատասխանեցի, որ ժամանակ չունեմ, և նա առաջարկեց գալ իմ տուն ամեն օր երկու-երեք ժամ, ինձ հարցեր տալ, ձայնագրել, հետո վերժանել և այդ բոլորը բաժանել գրախնդրի: Ես համաձայնեցի, բայց պայմանով, որ կխոսեմ միայն իմ կյանքի քաղաքական կողմի մասին, այլ ոչ թե անձնական: Այդպես էլ պայմանավորվեցինք: Չայնագրելով քառասուն ձայնեղիզ, Բրայանը մեկնեց իր տուն՝ Մոսկովյան, որտեղից երկու կամ երեք ամիս հետո ուղարկեց գրախնդրի բաժանված տեքստը: Ես հպանցիկ նայեցի այն, Բրայանին տեղեկացրի, որ կարող է հրատարակիչ փնտրել, և մոռացա այդ մասին:

Մինչև Բրայանը ինձ կգանգախալեր, անցավ ևս երեք ամիս:

- Վլադիմիր, ես այս ձեռագիրը ցույց տվեցի մի հիանալի խմբագրի, իմ հար բանեկանին, և նա ասաց, որ թեև սա շատ հետաքրքիր է, սակայն ոչ մի հրատարակիչ չի ցանկանա հրատարակել այն այդ տեսքով՝ առանց քո անձնական կյանքի վերաբերյալ արևե տեղեկության:

- Լավ, Բրայան, կմտածեմ,- պատասխանեցի ես:

Եվ անցա զիրքը նորից գրելու գործին՝ դեմ նետելով այն ամենը, որ ուղարկել էր Բրայանը:

Որքան հիշում եմ՝ ես գրեցի երկու տարի, որից հետո ձեռագիրն ուղարկեցի ինձ ծանոթ ամերիկյան գրական գործակալ Ֆրեդ Հիլլին: Գիրքը կարդալուց հետո Ֆրեդը զանգահարեց ինձ, ասաց, որ այն դուր է եկել իրեն, և ինքը կկապվի ինձ հետ՝ երբ հրատարակիչ գտնի:

Երկու ամիս անց նա տեղեկացրեց.

- Վլադիմիր, ես այնպիսի բան եմ արել, որ գրական գործակալները հազվադեպ են անում. ես քո ձեռագիրը միաժամանակ ուղարկել եմ Ամերիկայի յոթ խոշոր հրատարակչություններին:

- Եվ ի՞նչ:

- Այն, որ յոթն էլ պատասխանեցին մերժումով, մի քանիսը՝ անմիջապես, մի քանիսը՝ հետո, բայց մերժեցին:

Հիշում եմ, որ այդ խաբերի ընթացքում երկու զգացում ապրեցի՝ հիասթափություն և թեթևացում:

- Նշանակում է, վե՞րջ:

- Նշանակում է, որ քո գիրքը կդառնա բեսթսելլեր:

- ...

- Այո, այո, համբերությամբ լցվիր:

- Ես չգիտեի էլ ինչ մտածեմ, բայց շուտով Ֆրեդը զանգահարեց ուրախալի նուրբյանք՝ The Atlantic Monthly Press հրատարակչությունը գնել էր իմ գրքի հրատարակության կրավունքը և պատրաստ էր ինձ վճարել հարյուր հազար դոլար: Գումարը ցնցեց ինձ: Իմ խմբագիրը պետք է դառնար ոմն Էն Գուդֆ (փակագծում նշեմ, որ չնայած այս հրատարակչությունը ընդգրկված չէ խոշորագույնների ցանկում, բայց գրական շրջանակներում ունի շատ բարձր վարկանիշ, և ես այդ գիտեի: Ինչ ես չգիտեի՝ այն էր, որ Գուդֆը համարվում էր, այո, և համարվում է ԱՄՆ-ի ամենագիտակ և ուժեղ գրական խմբագիրը: Այժմ նա գլխավորում է Penguin Books հրատարակչությունը):

Գլխաբն լույս տեսավ 1990 թվականին, և ի զարմանս բոլորի, բացառությամբ Ֆրեդ Զիլլի, շատով հայտնվեց The New York Times թերթի ամենահեղինակավոր բեսթսելլերների ցուցակում և այնտեղ մնաց տասներկու շաբաթ:

Ինչպես հավանաբար կռահեցիք, ես գլխաբն գրել էի անգլերեն: Ես դատել էի այսպես. քանի որ իմ գլխահեղինակ կյանքը սկսվել է անգլերեն լեզվով, ես գլխաբն կգրեմ դրանով, իսկ հետո ինքս կթարգմանեմ ռուսերեն:

Գլխաբն, սակայն, ինձ տրվեց ճափագանգ դժվարությամբ, տառապանքներով: Այն միանգամայն ուժաթափ արեց ինձ, և վերջապես, ավարտելով այն, ես էլ չէի կարող մտածել ռուսալեզու տարբերակը ձեռնարկելու մասին: «Կսպասեմ, փոքր-ինչ կհանգստանամ,- ասում էի ինքս ինձ,- այնուհետև կանցնեմ թարգմանությունը»: Թարգմանելու միտքը ինձ երբեք չի քել: Շատերն էին ինձ խորհուրդ տալիս այն տալ թարգմանության, բայց դա հնարավոր չէր. չափից շատ էր անձնականը, ես նույնիսկ կասեի՝ ինտիմ բովանդակությունը թույլ չէր տալիս ինձ այն վստահել մոտ պատահի: Անցան տարիներ: Մի քանի անգամ ես սկսեցի թարգմանել և ամեն անգամ դադարեցի՝ ըստ էության, այդպես էլ չսկսելով: Եվ ահա տասնութ տարի անց վերջապես ես գլխաբն թարգմանեցի: Առժամանակ հետո կատարված պարտքի զգացումով սկսեցի կարգալ ռուսական տարբերակը... և սարսափեցի: Ես հասկացա, որ այն այդ տեսքով չի կարող լույս տեսնել: Ուրբան բան է տեղի ունեցել իմ կյանքում այս տասնութ տարիների ընթացքում, ուրբան բան է փոխվել իմ հայացքներում, ուրբան բան՝ այն ամենից, որ ինձ այն ժամանակ թվում էր ճիշտ, այսօր ճիշտ չի թվում: Ի՞նչ անել: Իհարկե՝ հնարավոր էր տեքստը ժամանակակից դարձնել, այսպես ասած, ուղղել, և այդ ժամանակ ընթերցողը կզարմանար, որ ես դեռ տասնութ տարի առաջ արտասովոր հեռատես եմ եղել...

Ես որոշեցի թողնել գլխաբն այնպիսին, ինչպիսին եղել է, բայց միևնույն ժամանակ յուրաքանչյուր գլուխը լրացնել գրվածի վերաբերյալ որոշակի մեկնաբանություններով: Մեկնաբանություններ, որոնք արտացոլում են այսօրվա հայացքները՝ ժամանակի մեջ ետ ու առաջ նմանատիպ քայլերով:

Թե ինչ ստացվեց և ստացվե՞ց արդյոք՝ չգիտեմ: Բայց այդ չգիտի ոչ ոք նրանցից, ովքեր փորձում են իրենց մտքերը արտահայտել բառերով և դրանք շարադրել թրթի վրա:

**Միանգամայն պարզ** հիշում են իմ մանկությունից մեկ օր: Ես խապում էի մորս ընկերների մերձքաղաքային տան ձեռնահարկում՝ քաշում էի փայտե նավակի պայանից: Իդեալական ուզում էի արձակել նավակը, բայց հանգույցը չէր ենթարկվում, թեև ես ամբողջ ուժով ջանում էի այն քանդել: Շուտով ինձ համար պարզ դարձավ, որ ամեն ինչում մեղավոր է նավակը: Ուժով նետելով այն հատակին՝ ես սկսեցի ոտքելավ հարվածել: Չայտայթից ինձ կորցրել էի: Այդ պահին հայտնվեց մայրս:

- Ավելի լավ չէ՞ գնաս ներքև, - առաջարկեց նա: - Այնտեղ մի պայան կա, որ շատ լավ քանդում է հանգույցերը:

Ես իջա և տեսա մի տղամարդու, ուրը նստած էր բազմոցին: Միգուցե ինձ դավաճանում է հիշողությունս, բայց հիմա էլ տեսնում եմ նրա դեղնականաչ, փոքր-ինչ ծաղրանքով ինձ նայող աչքերը: Ճիշտ է, դա ինձ շատ չէր անհանգստացնում: Ես մոտեցա նրան, աղջուների և խնայեցի օգնել ինձ՝ արձակելու հանգույցը: Նա ասաց.

- Դե ինչ, կփորձեմ, - վերցրեց նավակը և սկսեց ուշադրությամբ պայանը քանդել:

Ես մեծագույն ուշադրությամբ հետևում էի նրան և, չգիտես ինչու, ինձ վրա ուժեղ տպավորություն թողեց փոքր այտուցվածությունը, ուր ես նկատեցի նրա ձախ ձեռքի մատնենատի վրա: Նա հեշտությամբ հանգույցը քանդեց, որից ես ինձ անճար զգացի, և նավակը տվեց ինձ: Ես շնորհակալություն հայտնեցի: Իսկ մայրիկս ասաց.

- Նա քո հայրն է:



Ես 5 տարեկան եմ: Մանկապարտեզ Փարիզում:

Նա եկել էր Ամերիկա, որպեսզի մեզ վերադարձնել Ֆրանսիա: Ես հինգ տարեկան էի:

Չեմ հիշում, ուր այս հանդիպումը այն ժամանակ ինձ վրա մեծ տպավորություն թողեց: Չեմ հիշում նաև, ուր ես իմ կյանքի առաջին հինգ տարիներին հատուկ զգայի հորս բացակայությունը: Առաջ ես հայր չունեի, իսկ հիմա նա հայտնվեց, ահա և բուրբ: Ժամանակի թռնելի միջով շարժվելով դեպի այդ հեռավոր օրը, ես հուզմունք չեմ զգում ո՛չ մաշկիս վրա ցուրտ, ո՛չ փայրիս մեջ սառնություն. ոչ մի բան, որը խոսեր այդ մասին, որը պիտի հիշարությանս ու այրթնացներ մի քնած զգացում:

Եվ այնուամենայնիվ, այդ օրը ինձ համար ճակատագրական էր: Եթե հայրս չգայ մեր ետևից, իմ կյանքը ևս կընթանար միանգամայն այլ հունով:

\* \* \*

Իմ մայրը՝ Ժերարլին Նիբուայե Դյուբուա Լյուտենը, ֆրանսուհի էր: Նա, իր ելքայրը և երեք բույրերը ծնվել են ազնվագարն ընտանիքում, որի նախահայր Նապոլեոնը պարզևատրել էր բարոնի տիտղոսով՝ հավատարիմ ծառայության համար: Բարոնական տիտղոսը շատով դարձավ ընտանեկան լեգենդների և մեկնաբանությունների մի մաս, հսկայական նշանակությամբ մի իրադարձություն: Այդ մասին ես իրական պատկերացում կազմեցի միայն 1980 թվականին, երբ մորս զարմիկն ինձ կնոջս հետ իր փարիզյան տուն ընթրիքի հյրավարեց: Մենք մտանք մի սենյակ, և մեզ ներկայացրին «նախանախանախանախապապի» ղյմանկարը, ինչպես նաև կողքին կախված ոսկեգօծ շրջանակով բարոնական հավաստագիրը. այնպիսի հանդիսավորությամբ և խորագույն հարգանքով, կարծես խոսքը Սուրբ Գրասվի մասին էր:

Մայրս բարոնական տիտղոսին վերաբերվում էր հեզմանքով և շատ ավելի հպարտանում էր իր նախնիներից մեկ ուրիշով՝ առաջին առֆրաժիստուհի Էժենի Նիբուայեով: Երբ 1982 թվականին թողարկվեց լուցկու տուփ՝ պիտակի վրա նրա պատկերով, ավելին «Նա-



*Ռաուլ Դյուբուա՝ ամենայն հավանականությամբ իմ պապիկը*



Էժենի Նիբուայե՝ մորս կողմից իմ փափկը, և նրա առաջին ամուսին էրիկ (?) Լյուպտենը



Տափկը մահվանից քիչ առաջ

նանց ձայնը» թերթում 1882 թվականին նրա աշխատանքից մեջբերումով, դա մաքս խսկական ցնծություն պատճառեց:

Մեր ընտանիքը բավարարում էր ինչպես իր անբաններից մի քանիսի փառասիրությունը, այնպես էլ մյուսների հասարակական կենսական էներգիան և այդ իմաստով համապատասխանում էր ամենաբազմազան ճաշակների: Բայց մի բան նրան հստակ բավարար չէր՝ փողը: Հենց դա էլ հանգեցրեց նրան, որ իմ տատիկը, ով բացառիկ գեղեցկությամբ և հայակապ կրթությամբ կլին էր, իր ծնողներից ոչ մի ժառանգություն չտանալով և երեսուցիկն զտարեկանում կրկնակի այրվածաբարձ ստիպված էր միայնակ հայթայթել հանապազօրյա հացը՝ իր և իր հիվանդ երեխաների համար: Նա ամենատարբեր գույծունեությամբ էր զբաղվում՝ սկսած Ֆյունսիայում հարուստ զբոսաշրջիկների ընդունելության համար արշակների ղեկավարումից մինչև Լիմայում պերուական հարուստ ընտանիքների զավակներին ֆրանսերեն լեզվի և լավ վարվելաձևի ուսուցումը: Մայրս միշտ հիշում է անցումը Անդերի վրայով, այն ժամանակ նա ճոճվում է շի մեջքին կապված զամբյուղի մեջ և նայում էր ներքև՝ անհատակ անդունդների: Միգուցե հենց այդ ժամանակ՝ երեք կամ չորս տարեկանում, նա ձեռք բերեց տարափ բարձունքից, որից չկարողացավ ազատվել ամբողջ կյանքում: Երկրից երկիր տեղափոխվելով՝ երեխաները միայն մակերեսային կրթություն էին ստանում, և ի վերջո, մայրը նրանց տեղավորել էր գլխերօթիկ դպրոցներում:

Մայրս տեղավորվել էր Շուտլանդիայի Դանֆրիզ քաղաքի կանանց կաթոլիկ մենաս-

տանին կից դպրոցում: Այնտեղ ռատունը ավարտելով՝ նա վերադարձել էր Փարիզ, որտեղ աշխատանքի էր տեղավորվել ամերիկյան Paramount կինոընկերության ֆրանսիական մասնաճյուղում՝ որպես մանտաժայ: Շուտով նա ծանոթանում է հորս հետ:

Ասել, որ նրա ընտանեկան դպրոցումը տարբերվում էր իրենից, նշանակում է ոչինչ չասել: Ըստ էության՝ նրանք ոչնչով նման չէին: Հորս նախնիները խապանական հրեաներ էն, որոնք դեռ տասնևիզերորդ դարում փախել էին ինկվիզիցիայից և կանգ էին առել միայն Պոզնան քաղաք հասնելով, որտեղ և բնակություն էին հաստատել. այդտեղից է Պոզների ազգանունը: Մի քանի դար հետո, երբ այդտեղ Լեհաստանը դարձավ Ռուսական կայսրության մի մասը, Պոզներների տոհմի ներկայացուցիչներից առավել նախաձեռնող մեկը եկավ այն եզրակացության, որ կենտրոնացված պետության մեջ ավելի շահավետ է ապրել կենտրոնում, այսինքն Մանկտ Պետերբուրգում, և մեկնեց այնտեղ: Ուրբան ինձ հայտնի է՝ նրա ոչ պակաս ըմբռնող ժառանգներից մեկը, համարելով, որ Ռուսաստանում ավելի լավ է լինել ռուս և ուղղափառ, քան հրեա, դարձավ քրիստոնյա՝ դրանով այդ ճյուղին շնորհելով ռուս համարվելու արտոնությունը և, որ ավելի էական է՝ ազատելով նրան Ռուսաստանի համար ավանդական՝ հրեաների խտրականությունից:



Իմ մայրը մինչև հորս հետ ծանոթանալը: Փարիզ



Մորական կողմից իմ նախանախապապը՝ ճանաչված իրավաբան, Պապվո լեզիոնի ասպետ Ժան Պոլեն Նիբուայեն:



Դոյակ, որը վարձում էր իմ տատիկը, որպեսզի հանձներ հարուստ հյուրերին



Իմ պապ Ալեքսանդր Պոզները ավագ դպրեր՝ Ելենայի հետ՝ նույն ինքը՝ իմ ապագա հորաքույր Լյույան:



Հայրիկիս կողմից իմ նախապապը՝ Մարիա Պերլը



Ելենա Ալեքսանդրի Պոզներ (հորաքույր Լյույան)

\* \* \*

Գուցի այդպես է, գուցի և՛ ոչ: Գիրքը լույս տեսնելուց մի քանի տարի հետո ես գրուցեցի հորս ավագ քրոջ՝ Ելենա Ալեքսանդրովնա Վիլգայի (ամուսնական ազգանունն է) հետ, ով ջերմեռանդորեն ապացուցում էր ինձ, որ ոչ մի քրիստոնեադարձություն ընդունիքում չի եղել: Լյույան ամենակատարյալ աթեիստիկ էր, բայց վաթսուամյակների սկզբներին Ֆլորենցիայից Նյու Յորք մեկնելով՝ դարձավ տեղի ռուսական ուղղափառ եկեղեցու ակտիվիստ, թեև շարունակում էր ժխտել աստծու (գրում եմ փոքրատառով, քանի որ ինքս ևս աթեիստ եմ) գոյությունը: Լյույան երբեք չէր ամաչում իր հրեա լինելուց (ի տարբերություն իր փոքր քրոջ՝ Վիկտորյայի և իմ հոր), բայց բացարձակապես անտեսում էր վարքագծի այն կանոնները, որ պետք է պահպաներ ուղղափառ հրեան: Երբ իր մահից երկու տարի առաջ նա ծանր հիվանդացավ, ուզում էին նրան տեղափոխել հրեական կլինիկայում (այնտեղ բուժումը և՛ անվճար էր, և՛ բարձր մակարդակով), որի համար պահանջվում էր ներկայացնել փաստաթղթեր, որոնք հաստատում էին, որ նա հրեուհի է: Այդպիսիք հասկանալի է, որ չկային: Ստիպված էին մի փոքր կաշառք տալ Նյու Յորքի ռաբբիներից մեկին, ով գրավոր վավերացրել էր, որ Լյույան, 1925-1962 թվականներին ապրելով Նյու Յորքում, կանոնավոր հանախել է սինագոգ և պահպանել է հրեական բոլոր տոները: Նրան վերցրեցին հիվանդանոց: Այնտեղ էլ նա մահացավ: Նա թաղված է Ֆլորենցիայի հրեական գերեզմանատանը:

Վիկտորյան, նույն ինքը՝ Տոյոն, նույնպես հերքում էր քրիստոնեադարձության փաստը: Այն մասին, որ իմ պապը եղել է քրիստոնեադարձ, հաստատում էր, որքան ես հիշում եմ, նրա որդին՝ իմ հայրը: Ի դեպ հորս ընդունիքի մասին. նրա տատը՝ մայրական կող-



Իմ տատը Ելիզավետա Պերլը



Իմ պապ Ալեքսանդր Պոզները:  
Սանկտ Պետերբուրգ, 1905թ.



Իմ հայրը նավաստու հագուստով  
(մատրոսկա) երկու քույրերի՝ Լյուլայի և  
Տոյոյի հետ: Սանկտ Պետերբուրգ, 1916թ.



Իմ նախապապ Մարիա Պերլը՝ իմ հոր և երկու  
հորաքույրերի հետ: Ետևի շարքի կանայք ինձ  
անձանոթ են: Սանկտ Պետերբուրգ

մից, ծնվել է Կրոնչյուսդարում, որը կրկին չի փեղավորվում ոչ մի կանոնի մեջ, քանի որ Կրոնչյուսդարը հանդիսանում է ռազմածովային քաղա, և հրեաներն այնտեղ փեղ չունեին: Հեյրազայում Նևսկու վրա նա ուներ ֆոֆոխասնուք (փուն 66), և այս գրքի շար լուսանկարներ իրենց գոյությամբ պարտական են նրան:

Եվս մի քան. իմ երկու հորաքույրները՝ Ելենա և Վիկտորյա Ալեքսանդրովաները, փեղ են գտել Կորնեյ Բվանովիչ Չուկովսկու «Կոկորդիլոս» հեքիաթում, որպես երեխաներ՝ Լյոլյոշան և Տոֆոշան: Այնպես որ՝ ես կարող եմ հպարտանալ նրանով, որ հանդիսանում եմ երկու հավերժացած հորաքույրների եղբորորդին: Ով է նիշը՝ չգիտեմ, քայց ինչպես կարող էր իմ պապը՝ հրեա Ալեքսանդր Պոզները, սովորել Պիտերում, (Կապի ուղիների ինժեներների ինստիտուտում), իսկ հեպո լինել արդեն թագավորական ծառայության մեջ. չեմ հասկանում: Ցավոք սրտի, այլևս չկա ոչ մեկը, ում կարող եմ հարցնել, արդեն չկա ոչ ոք, ով կարող է լույս սփռել այս պարմության վրա, իսկ քանի դեռ նրանք ողջ էին, ես այնքան էլ շար չէի հեյրաքրքրվում: Միս թե ինչ փարօրինակ է: Քանի դեռ մեր ծնողները մեր կողքին են, մենք թիչ ենք հեյրաքրքրվում նրանց անցյալով: Ըստ երևույթին, մեզ ենթագիտակցորեն թվում է, որ նրանք ընդմիշտ մնալու են մեր կողքին: Կամ էլ մեր ինքնավարահոթյամբ համոզված ենք, թե մեզ այնպես էլ ամեն ինչ հայրնի է, ամեն ինչ հասանելի... Իսկ հեպո ուշ է, ուշ է, ուշ է:

\* \* \*

Մի խոսքով, իմ հայրը մեծացել է տիպիկ ռուսական մտավորականների միջավայրում, որտեղ համբերատարությունը, տեսակետների անկեղծությունը և ամեն առիթով թեժ քանավեճերը ամենօրյա «կերակրացանկի» մաս էին կազմում. այնպես, ինչպես և առավոտյան հնդկաձավարի շիլան: Երբ 1917 թվականի փետրվարյան հեղափոխությունը հանգեցրեց ցարի կրաժարականին, իսկ նրան հաջորդեց նոյեմբերյան բուլշևիկյան հեղաշրջումը, Պոզներները, ինչպեսև ուս մտավորականության մեծամասնությունը, ջերմեռանդ ծափահարեցին:

Իմ հայրը և իր երկու քույրերը սովորում էին մայրաքաղաքի լավագույն գլխնազխաներից մեկում, Տյունիշևի գլխնազխայում՝ չընկնելով «կրեական» հինգուկուսանոց քվատայի տակ: Դիշտ նույն ձևով, ինչպես դրա տակ չէր ընկել նրանց հայրը՝ իմ պապը, ուր ավարտել էր Կապուլիների ինժեներների ինստիտուտը՝ երկրի ամենահեղինակավոր ուսումնական հաստատություններից մեկը, ուր կրեաների մուտքը պատվիրված էր: Ավելի ուշ անձամբ Նիկոլայ II-ը նրան ու-